ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ IV ԵՌԱՄՍՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N	Հաշվետվության բովանդակությունը	էջը
1.	***Նախաբան***	1
2.	***Ստուգումներ*** 2.1. ***ՀՀ 54 դպրոցներ*** 2.2. ***ՀՀ 1 նախնական մասնագիտական և 2 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ***	4 21
3.	***Հետադարձ կապ*** 3.1. ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում ԿՏՄ ղեկավարի կարգադրագրերով տրված հանձնարարականների և հաստատություններից 2022 թվականի IV եռամսյակում ստացված կատարողականների համադրման արդյունքներ 3.2. Վերստուգումներ 3.3. Լիազոր մարմինների կողմից կիրառված պատասխանատվության միջոցներ	28 29 31
4.	***Դիմումներում, բողոքներում բարձրացված խնդրների ուսումնասիրություն կամ ստուգում***	31
5.	***Կանխարգելիչ, աջակցման և խորհրդատվական միջոցառումներ***	32
6.	***Օրենսդրական առաջարկների մասին տեղեկատվություն***	34
7.	***Ստուգվող հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ մշակված ձևաթղթի***	35
8.	***Ստուգվող հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ մշակված ձևաթղթի***	37

ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի IV եռամսյակի գործունեությունը

1. Նախաբան

2022 թվականի IV եռամսյակում ՀՀ կրթության տեսչական մարմինն (այսուհետ՝ նաև ԿՏՄ) իրականացրել է ստուգումներ և խորհրդատվական, իրազեկման, աջակցման միջոցառումներ:

Համաձայն 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ 2022 թվականի IV եռամսյակում ՀՀ 45 հանրակրթական (դպրոց), 2 միջին մասնագիտական (քոլեջ) և 1 նախանական մասնագիտական (ուսումնարան) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում նախատեսված բոլոր ստուգումներն իրականացվել են:

Ըստ ստուգումների տարեկան ծրագրի իրականացված 1 ստուգման միջին տևողությունը հանրակրթության ոլորտում կազմել է 5, նախնական մասնագիտական կրթության ոլորտում՝ 7, միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ 6 աշխատանքային օր:

Հաշվետվության մեջ ներառվել են նաև 2022 թվականի III եռամսյակում ստուգված, սակայն IV եռամսյակում ամփոփված 9 դպրոցների արդյունքները: **Հանրակրթության ոլորտում** իրականացված 54 ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել ստուգված դպրոցներից **52**-ում՝ կազմվել է 52 ակտ: Ստուգումների արդյունքում արձանագրվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների 697 խախտումներ:

19 դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում՝ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» (հանրահաշիվ, երկրաչափություն) առարկաներից VI, IX և XI դասարանների սովորողների նախորդ տարվա մնացորդային գիտելիքների ստուգման նպատակով՝ տրվել են գրավոր աշխատանքներ: «Հայոց լեզու» առարկայի թելադրության միջին գնահատականը կազմել է **5.5** միավոր, «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքների միջին գնահատականը՝ **4.3** միավոր (10 միավորային սանդղակում):

ԿՏՄ գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրում ներառված «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագրին (ԱՈՒԿ) համապատասխան՝ ստուգված 10 դպրոցներում իրականացվել են դասալսումներ՝ ուսուցիչներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասերի ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և լուծման, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության որակի բարձրացման և կրթության արդյունավետ կազմակերպման նպատակով: Իրականցված գործընթացների վերաբերյալ վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով ուղարկվել են դպրոցների տնօրեններին: Ամփոփվել են ԱՈՒԿ ծրագրի շրջանակում 2022 թվականին 20 դպրոցներում իրականացված դասալսումների արդյունքները: Դասալսումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը հրապարակվել է ԿՏՄ պաշտոնական կայքում, տրամադրվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարին:

18 դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում իրականացվել է տարրական դպրոցի սովորողների ընթերցելու և ընկալելու կարողությունների գնահատում: Գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունը հրապարակվել է ԿՏՄ պաշտոնական կայքում. http://www.eib.am/reports/:

Միաժամանակ, դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում կիրառվել է ուսուցման գործընթացում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ

բոլոր առարկաների ուսուցման ապահովման (չուսուցանվող առարկաների առկայության դեպքում) և ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթուղթը: Գնահատում իրականացվել է 54 դպրոցներից 5-ում: Հեռավար ուսուցման անհրաժեշտություն ունեցող առարկաների ուսումնասիրմանը վերբերող խնդիրներ առկա են եղել 2 դպրոցներում: Չուսուցանվող առարկաների կազմակերպման և ուսուցանման խնդիրների մասին համապատասխան գրություններով տեղեկացվել են ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Շիրակի մարզպետներին:

Ներառական կրթական միջավայրի գնահատումներ են իրականացվել 54 դպրոցներից 36-ում: Գնահատման արդյունքների վերլուծությունը՝ համապատասխան առաջարկներով՝ կտրամադրվի լիազոր մարմինների ղեկավարներին և ԿԳՄՍ նախարարին:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում՝ ըստ ստուգումների ծրագրի՝ իրականացված 3 ստուգումների դեպքում խախտումներ են հայտնաբերվել 3 ուսումնական հաստատություններում, կազմվել է 3 ակտ: Ստուգումների արդյունքում արձանագրվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների 15 խախտումներ:

Համաձայն ԿՏՄ գործունեության 2022 թվականի ծրագրի՝ կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատման, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանությանը և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանը աջակցելու նպատակով՝ 1-ական քոլեջում և ուսումնարանում անցկացված ստուգումների շրջանակում իրականացվել է մասնագիտությունների կրթական գործընթացի որակի, ինչպես նաև ներառական կրթական միջավայրի ապահովման նպատակով՝ ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ մշակված ձևաթղթերի: Կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով՝ տրամադրվել են հաստատությունների տնօրեններին:

Ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթղթերը չեն կիրառվել՝ այդ քոլեջներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողներ չլինելու պատճառով:

ԿՏՄ-ում ստացվել են 17 դիմում-բողոքներ 12 ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ: Ստացված դիմում-բողոքներից 14-ը վերաբերել է դպրոցների, **1**-ը՝ մանկապարտեզների գործունեությանը, 2-ը եղել է այլ բնույթի: Առավել շատ բարձրացված հարցերը վերաբերել են տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին և անարդյունավետ աշխատանքին:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է 8 իրազեկման, խորհրդատվական միջոցառումներ ՀՀ 6 հանրակրթական, 39 նախնական մասնագիտական

(արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնակցությամբ:

ԿՏՄ կողմից լրամշակման **առաջարկություններ** են ներկայացվել մի շարք իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

2. Ստուգումներ

2.1. ՀՀ 54 դպրոցներ

Հիմքը՝

ԿՏՄ 2022 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանները:

Նպատակը՝

Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության ապահովման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, տվյալների բազա ձևավորելու նպատակով:

Ժամկետը՝

2022 թվականի IV եռամսյակ:

Ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝

Յուրաքանչյուր դպրոցի համար ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատված է ընդունվել ներքոնշյալ ժամանակահատվածից մինչև տվյալ դպրոցում ստուգումը սկսելու օրը:

Ստուգման արդյունքները՝

Հաշվետվությունում ներկայացվում են 2022 թվականի III եռամսյակում ստուգված **9** և IV եռամսյակում ստուգված 45 դպրոցների ստուգումների արդյունքները:

Ստուգված 54 դպրոցներից 11-ը Երևանի քաղաքապետարանի, 8-ական՝ ԿԳՄՄՆ և ՀՀ Շիրակի մարզպետարանի, 6-ը՝ ՀՀ Լոռու, 4-ական՝ ՀՀ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, 2-ական՝ ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի, 1-ը ՀՀ Սյունիքի մարզպետարանների ենթակայության դպրոցներ են:

Ստուգումների արդյունքում ձևավորված գումարային և միջինացված ռիսկային միավորներն՝ ըստ ստուգաթերթերի և համապատասխան ստուգաթերթի կշռային միավորի նկատմամբ տոկոսային համամասնության, ներկայացված են աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1

54 դպրոցների ստուգումների արդյունքներ										
Ստուգաթերթ	*N1*	*N2*	*N3*	*N4*	*N5*	*N7*	*N8*	*N9*	*N10*	*Ընդհանուր ռիսկային միավոր*

Գումարային ռիսկային միավոր	**17.4**	**110.5**	**65**	**12.4**	**16.8**	**17.9**	**37.3**	**6.5**	**0.6**	**284.4**
Միջինացված միավորներ	**0.33**	**2.05**	**1.2**	**0.23**	**0.31**	**0.33**	**0.69**	**0.12**	**0.01**	**5.27**
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	**1.94**	**14.62**	**7.52**	**1.23**	**1.82**	**2.24**	**9.09**	**1.72**	**0.08**	**4.2**

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ ուսուցչի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ձևավորվել է ամենամեծ գումարային, ինչպես նաև միջինացված ռիսկային միավորը (*ըստ N2 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 40 (74%) դպրոցներում): Ստուգված դպրոցներում հիմնականում սահմանված կարգով են իրականացվում սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացումը, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացումը, սովորողների հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրումը: Թվարկված գործընթացներին վերաբերող խախտումներ են արձանագրվել 2 (3.7%) դպրոցներում:

Ըստ ռիսկայնության երկրորդ տեղում է դպրոցում տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքները (*ըստ N3 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 37 (69%) դպրոցներում): Դպրոցում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում (*ըստ N8 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 42 (78%) դպրոցներում) ձևավորված միջինացված ռիսկային միավորը կազմել է 0.69, որն ըստ մեծության միջինացված միավորներից երրորդն է, մինչդեռ ըստ համապատասխան ստուգաթերթի ռիսկային միավորի նկատմամբ տոկոսային թվի՝ մեծությամբ երկրորդն է: Այսինքն, ստուգված դպրոցներում ռիսկային է նաև ուսուցչի թափուր տեղի մրցույթի անցկացման գործընթացը: Տարածվածության առումով առաջին տեղում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարման խախտումներն են՝ ստուգված դպրոցների 78%-ում:

Անդրադառնանք դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված գումարային և միջինացված ռիսկային միավորներին ըստ ենթակայության (երբ տրված լիազոր մարմնի ենթակայության ստուգված դպրոցների թիվը 6 և ավելի է):

Երևանի քաղաքապետարանի ենթակայության 11 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորներն, ըստ ստուգաթերթերի, ներկայացված են աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2

Երևանի 11 դպրոցների ստուգումների արդյունքներ										
Ստուգաթերթ	***N1***	***N2***	***N3***	***N4***	***N5***	***N7***	***N8***	***N9***	***N10***	***Ընդհանուր ռիսկային միավոր***

Գումարային ռիսկային միավոր	**3.2**	**27.5**	**18.8**	**3.4**	**3.4**	**2.8**	**9.7**	**2.7**	**0**	**71.5**
Միջինացված միավորներ	**0.29**	**2.5**	**1.71**	**0.31**	**0.31**	**0.25**	**0.88**	**0.25**	**0**	**6.5**
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	**1.75**	**17.86**	**10.68**	**1.66**	**1.81**	**1.72**	**11.6**	**3.51**	**0**	**5.18**

Ինչպես ներկայացված է աղյուսակ 2-ում՝ Երևանի ստուգված դպրոցներում ևս ուսուցչի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ձևավորվել է ամենամեծ գումարային, ինչպես նաև միջինացված ռիսկային միավորը (*ըստ N2 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել բոլոր 11 դպրոցներում): Ըստ ռիսկայնության երկրորդ տեղում է դպրոցում տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքները (*ըստ N3 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 7 (64%) դպրոցներում): Միջինացված միավորներից երրորդն է, մինչդեռ ըստ համապատասխան ստուգաթերթի ռիսկային միավորի նկատմամբ տոկոսային թվի մեծության երկրորդն է ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ձևավորված միջինացված ռիսկային միավորը (*ըստ N8 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 9(82%) դպրոցներում): Երևանի ստուգված դպրոցներում սահմանված կարգով են իրականացվում սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման գործընթացները:

ԿԳՄՍ նախարարության ենթակայության 8 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորներն, ըստ ստուգաթերթերի, ներկայացված են աղյուսակ 3-ում.

Աղյուսակ 3

ԿԳՄՍ նախարարության ենթակայության 8 դպրոցների ստուգումների արդյունքներ										
Ստուգաթերթ	***N1***	***N2***	***N3***	***N4***	***N5***	***N7***	***N8***	***N9***	***N10***	***Ընդհանուր ռիսկային միավոր***
Գումարային ռիսկային միավոր	**2.4**	**9.5**	**5.6**	**1**	**2.3**	**1.2**	**3.4**	**0.3**	**0**	**25.7**
Միջինացված միավորներ	**0.3**	**1.19**	**0.7**	**0.13**	**0.28**	**0.15**	**0.43**	**0.04**	**0**	**3.22**
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	**1.81**	**8.48**	**4.38**	**0.67**	**1.68**	**1.01**	**5.59**	**0.54**	**0**	**2.56**

Ստուգումների արդյունքների հաջորդականությունը ըստ ռիսկայնության պահպանվում է նաև ԿԳՄՍ նախարարության ենթակայության դպրոցներում: Այս դպրոցներում ևս սահմանված կարգով են իրականացվում սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման գործընթացները: Ի համեմատ Երևանի ստուգված դպրոցների՝ ավելի փոքր են ստուգաթերթերի ռիսկային միավորների %-ային թվերը, ինչը նշանակում է, որ խախտումների միջինացված թվերը ավելի փոքր են ԿԳՄՍ նախարարության ստուգված դպրոցներում:

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության 8 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորներն ըստ ստուգաթերթերի ներկայացված են աղյուսակ 4-ում.

Աղյուսակ 4

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության 8 դպրոցների ստուգումների արդյունքներ										
Ստուգաթերթ	***N1***	***N2***	***N3***	***N4***	***N5***	***N7***	***N8***	***N9***	***N10***	***Ընդհանուր ռիսկային միավոր***
Գումարային ռիսկային միավոր	**4.4**	**12.5**	**15**	**1**	**3.6**	**5.8**	**6.2**	**1.3**	**0.3**	**50.1**
Միջինացված միավորներ	**0.55**	**1.56**	**1.88**	**0.13**	**0.45**	**0.73**	**0.77**	**0.16**	**0.04**	**6.27**
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	**3.31**	**11.16**	**11.72**	**0.67**	**2.63**	**4.9**	**10.20**	**2.32**	**0.27**	**4.99**

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության 8 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքները այլ են (աղյուսակ 4): Ստուգումների արդյունքում ամենամեծ գումարային, ինչպես նաև միջինացված ռիսկային միավորը ձևավորվել է դպրոցում տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում (*ըստ N3 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 7 (88%) դպրոցներում): Երկրորդ տեղում ուսուցչի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ձևավորված միջինացված ռիսկային միավորն է (*ըստ N2 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 3 (38%) դպրոցներում), իսկ երրորդ տեղում կրկին՝ դպրոցում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում (*ըստ N8 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 7 (88%) դպրոցներում) ձևավորված միջինացված ռիսկային միավորը:

Այս մարզում ևս հիմնականում սահմանված կարգով են իրականացվում սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացումը, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացումը, սովորողների հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան

փոխադրումը: Թվարկված գործընթացներին վերաբերող խախտումներ են արձանագրվել 1 (13%) դպրոցում:

Աղյուսակ 5

ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության 6 դպրոցների ստուգումների արդյունքներ										
Ստուգաթերթ	***N1***	***N2***	***N3***	***N4***	***N5***	***N7***	***N8***	***N9***	***N10***	***Ընդհանուր ռիսկային միավոր***
Գումարային ռիսկային միավոր	**0.4**	**9**	**2**	**2**	**1**	**0.4**	**3.3**	**0**	**0**	**18.1**
Միջինացված միավորներ	**0.1**	**1.5**	**0.3**	**0.3**	**0.2**	**0.1**	**0.6**	**0**	**0**	**3.1**
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը	**0.4**	**10.71**	**2.08**	**1.79**	**0.97**	**0.45**	**7.24**	**0**	**0**	**2.4**

Համաձայն աղյուսակ 5-ի տվյալների՝ ՀՀ Լոռու մարզի 6 դպրոցներում ամենամեծ գումարային, ինչպես նաև միջինացված ռիսկային միավորը ձևավորվել է ուսուցչի պարտականությունների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում (*ըստ N2 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 5 (83%) դպրոցներում): Նշված միավորը ըստ մեծության երկրորդն է դպրոցում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում (*ըստ N8 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 4 (67%) դպրոցներում), երրորդը՝ դպրոցում տնօրենին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում (*ըստ N3 ստուգաթերթի* խախտումներ են արձանագրվել 2 (33%) դպրոցներում): ՀՀ Լոռու մարզի ստուգված դպրոցներում սահմանված կարգով են իրականացվում թե սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման, թե դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխման և ազատման գործընթացները

Համեմատելով ստուգումների արդյունքների միջինացված միավորները կարող ենք նշել, որ կրթական գործընթացի իրականացումը 54 դպրոցների միջինացված ռիսկային միավորի համեմատ պակաս ռիսկային է ՀՀ Լոռու մարզի, ապա ԿԳՄՍ նախարարության ենթակայության ստուգված դպրոցներում, ավելի ռիսկային՝ ՀՀ Շիրակի մարզի, ապա Երևանի ստուգված դպրոցներում:

Վերոնշյալ 54 դպրոցներից 8-ում ԿՏՄ կողմից ստուգում իրականացվել է առաջին անգամ: 46 դպրոցներից 38-ում (83%)՝ վերջին ստուգման արդյունքում ձևավորված ռիսկային միավորն ըստ ստուգաթերթերի՝ ցածր է նախորդ ստուգման արդյունքներից: Ստուգումների

արդյունքում ձևավորված ռիսկային միավորների համեմատական պատկերը ներկայացված է գծապատկեր 1-ում.

Գծապատկեր 1



Սակայն, Երևանի հ.հ. 74, 129 հիմնական, ***ՀՀ Շիրակի մարզի Արդենիսի, Ամասիայի, ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի, ՀՀ Կոտայքի մարզի Պառոշյանի ՀՀ Արագածոտնի մարզի Լեռնապարի, ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափի միջնակարգ դպրոցներում*** 2022 թվականին իրականացված ստուգման արդյունքում ռիսկային միավորը աճել է նախորդ ռիսկային միավորի համեմատ: Ռիսկային միավորը զրոյացել է 2 դպրոցներում:

54 դպրոցներից **52-ում (96%)** հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենդրության պահանջների **697** խախտումներ, որոնցից **38-ը (5%)** նշվել են լիազոր մարմինների ղեկավարներին ուղղված գրություններում:

Առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները, ըստ դպրոցների (%) և խախտումների թվի (%), ներկայացված են աղյուսակ 6-ում.

Աղյուսակ 6

Հ/Հ	*Խախտման բնույթ*	*Դպրոցների թիվ (54)*	*Խախտումների թիվ (697)*
1	*Լիցենզիա*	*1 (2%)*	*1 (0,1%)*

2	*Զինղեկ, քաղաքացիական պաշտպանության պետ*	*5 (9%)*	*10 (1,45%)*
3	*Կանոնադրություն*	*36 (67%)*	*36 (5%)*
4	*Ներքին գնահատում*	*2 (4%)*	*20 (3%)*
5	*Պաշտոնային պարտականությունների կատարում**	*15 (28%)*	*75 (11%)*
6	*Վարչական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածություն*	*8 (15%)*	*21 (3%)*
7	*Ուսուցչի մրցույթի ընթացակարգ*	*24 (44%)*	*93 (13%)*
8	*Կադրեր*	*43 (80%)*	*217 (31%)*
9	*Խորհրդակցական մարմիններ*	*18 (33%)*	*116 (17%)*
10	*Ուսումնական պլան*	*21 (39%)*	*44 (6%)*
11	*Կրթության կազմակերպում*	*4 (7%)*	*10 (1,45%)*
12	*Օլիմպիադա*	*5 (9%)*	*11 (2%)*
13	*Սովորողների համակազմ*	*17 (31%)*	*43 (6%)*
Ընդամենը		*697 խախտումներ*	

Ելնելով աղյուսակ 6-ի տվյալներից՝ կարող ենք նշել.

առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ դպրոցների թվի (%) վերաբերել են՝

- մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **43 (80%),**
- կանոնադրության անհամապատասխանությանը՝ **36 (67%),**
- ուսուցչի մրցույթի ընթացակարգին՝ **24 (44%),**
- ուսումնական պլանի պահանջներին՝ **21 (39%) դպրոցներում,**

առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթները՝ ըստ խախտումների թվի (%), վերաբերել են՝

- մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ **217 (31%),**
- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ **116 (17%),**
- ուսուցչի մրցույթի ընթացակարգին՝ **93 (13%),**
- պաշտոնային պարտականությունների կատարմանը **75 (11%) խախտումներ:**

Ստուգման արդյունքների վերլուծությունից հետևում է, որ 2022 թվականի 2-րդ կիսամյակում ստուգված դպրոցների **39%-ը** պատշաճ չեն ապահովել ուսումնական պլանի, **44%-ը՝ ուսուցչի մրցույթի ընթացակարգի պահանջների կատարումը,** իսկ դպրոցների գերակշռող մասը (կեսից ավելին) չունի օրենսդրական փոփոխություններով ամրագրած կանոնադրություն՝

67% , ինպես նաև սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական աշխատողների նշանակումը՝ **80%**: Իրականացված ստուգումների արդյունքների վերլուծությունն ըստ դպրոցների հրապարակվել է ԿՏՄ կայքում *(http://eib.am/hy/report):*

2022 թվականի IV եռամսյակում ստուգված 19 դպրոցների VI, IX, XI դասարանների սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով ԿՏՄ կողմից տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից: Գրավոր աշխատանքների արդյունքները այսպիսին են.

«Հայոց լեզու» առարկայից տրված թելադրությանը մասնակցած 1931 սովորողներից (Գծապատկեր 2) «Գերազանց» են գնահատվել 249-ը (13%), «Լավ»՝ 594-ը (31%), «Բավարար»՝ 566-ը (29%), «Անբավարար»՝ 522-ը (27%):

Գծապատկեր 2



«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած 1880 սովորողներից (Գծապատկեր 3) «Գերազանց» են գնահատվել 110-ը (6%), «Լավ»՝ 220-ը (12%), «Բավարար»՝ 732-ը (39%), «Անբավարար»՝ 818-ը (43%):

Գծապատկեր 3



Գրավոր աշխատանքների արդյունքները, հետևաբար նաև միջին գնահատականները, հիմնականում ավելի բարձր են «Հայոց լեզու» առարկայի թելադրության դեպքում (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4



Ինչպես ներկայացված է գծապատկեր 4-ում՝ **«Հայոց լեզու»** առարկայի թելադրության միջին գնահատականը ամենացածրն է XI դասարանում, ամենաբարձրն է՝ IX դասարանում,

իսկ **«Մաթեմատիկա»** առարկայի գրավոր աշխատանքներից բարձր արդյունքը գրանցվել է XI, ցածր արդյունքը՝ IX դասարանում:

Գրավոր աշխատանքների արդյունքներն ըստ առարկաների և դասարանների (տոկոսային համամասնությամբ)՝ ներկայացված են 5 և 6 գծապատկերներում:

Գծապատկեր 5



Գծապատկեր 6



«Հայոց լեզու» առարկայի թելադրությունից «Անբավարար» են գնահատվել ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 1 միջնակարգ դպրոցի VI դասարանցիների 67%-ը, XI դասարանցիների՝ 56%-ը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցի XI-րդցիների 64%-ը, Երևանի թիվ 46 ավագ դպրոցի XI-րդցիների 62%-ը, Երևանի թիվ 53 հիմնական դպրոցի VI-րդցիների 49%-ը:

«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքից «Անբավարար» են գնահատվել VI դասարանցիների 84%-ը ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 1 միջնակարգ դպրոցում, 74%-ը՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոցում, 72%-ը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

Համեմատելով ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքի արդյունքները այդ սովորողների նույն առարկաների նախորդ տարվա տարեկան գնահատականների հետ ստացել ենք հետևյալ պատկերը (Գծապատկերներ 7, 8).

Գծապատկեր 7



Գծապատկեր 8



Գնահատականները խիստ հակասական են հատկապես «Անբավարար» գնահատականների դեպքում: Կարևոր է նշել, որ գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների նախորդ ուստարվա տարեկան գնահատականները ևս ավելի ցածր են մաթեմատիկայի դեպքում:

Ուսումնասիրվել են նաև այդ դպրոցների նախորդ ոսումնական տարվա ավարտական և պետական ավարտական, պետական միասնական քննությունների արդյունքները: Նախորդ տարվա հիմնական դպրոցի «Մաթեմատիկա» առարկայի ավարտական քննությունից «Անբավարար» են գնահատվել Գորիսի թիվ 1 ավագ դպրոցի 6 (11%), Վանաձորի թիվ 24 միջնակարգ դպրոցի 1 սովորողներ: Նույն քննությունից «Գերազանց» են գնահատվել Արմավիրի թիվ 2 հիմնական դպրոցի 57 (58%), Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոցի 30 (35%) սովորողներ: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ ԿՏՄ կողմից տրված մաթեմատիկայի գրավոր աշխատանքից Գորիսի թիվ 1 ավագ դպրոցի գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների միջին գնահատականը կազմել է 6.7 միավոր՝ «Լավ», մինչդեռ Արմավիրի թիվ 2, թիվ 8 միջնակարգ դպրոցներում՝ 3 միավոր՝ «Անբավարար»:

ԿՏՄ 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրի շրջանակում, ԿՏՄ գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրում ներառված՝ «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» (այսուհետ՝ ԱՈՒԿ) ծրագրին համապատասխան, ՀՀ 20 դպրոցներում՝ ուսուցիչներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասերի ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և լուծման, ինչպես նաև դասավանդման և

ուսումնառության որակի բարձրացման և կրթության արդյունավետ կազմակերպման նպատակով իրականացվել են՝

– ուսումնական պարապմունքների լսումներ[1] «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից VI, IX, XI դասարաններում, դասավանդողի և սովորողի գործողությունների դիտարկում, գրավոր առաջադրանքների միջոցով սովորողների գիտելիքների գնահատում.

– դասավանդողի մանկավարժամեթոդական կարողությունների, մասնագիտական գիտելիքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման զարգացմանն ուղղված մեթոդական աջակցության տրամադրում:

Դասալսումներն իրականացրել են գործընթացում օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավված մասնագետները՝ տեսչական մարմնի կողմից մշակված գործիքակազմի (դասալսման և սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման և կրթության բովանդակային կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացությունների ձևաթղթեր) հիման վրա:

Դասալսումներն իրականացվել են դպրոցի այն ուսուցիչների մոտ, որոնց դասավանդած դասարաններում (VI, IX, XI) սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների շրջանակում տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից:

«Մաթեմատիկա» առարկայի առաջադրանքները կազմվել են Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից, «Հայոց լեզու» առարկայից տրված թելադրության նյութերը վերցվել են նախորդ դասարանում յուրացրած նյութերից:

Ուսումնական պարապմունքների լսումների հիման վրա դասալսողների կողմից լրացվել են դասալսումների ձևաթղթերը (ըստ դրանց լրացման ուղեցույցի), կազմվել են սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման և կրթության բովանդակային կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացություններ:

Տեսչական մարմնի կողմից դասալսող մասնագետների ներկայացրած տվյալները համադրվել են սովորողների գիտելիքների գնահատման արդյունքների միջին ցուցանիշների հետ՝ դասավանդման և ուսումնառության արդյունավետության գնահատման ամփոփ պատկեր ստանալու նպատակով:

---

[1] *Սովորողների առարկայական գիտելիքները գնահատելու նպատակով դասալսումները իրականացվել են «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից VI, IX, XI դասարաններում, որտեղ տրվել են նաև գրավոր աշխատանքներ: Առարկաների ընտրությունը պայմանավորվում է նրանով, որ թե՛ հայոց լեզուն, թե՛ մաթեմատիկան Հանրակրթության պետական չափորոշչով պարտադիր ուսուցման համար սահմանված հիմնական առարկաների՝ «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Օտար լեզու», ցանկում են: Դրանք հիմնարար առարկաներ են, որոնք ունեն երաշխավորված ժամաքանակ բոլոր դպրոցներում՝ անկախ դպրոցի կազմակերպահրավական ձևից:*

Ուսուցիչների գնահատումն իրականացվել է 4 միավորային (4՝ «Գերազանց», 3՝ «Լավ», 2՝ «Բավարար», 1՝ «Անբավարար»), իսկ սովորողների գնահատումը՝ 10 միավորային սանդղակով (9-10՝ «Գերազանց», 7-8՝ «Լավ», 4-6՝ «Բավարար», 1-3՝ «Անբավարար»):

Ուսուցիչները գնահատվել են ըստ հետևյալ բնութագրիչների՝

–ուսուցիչների ՏՀՏ իմացությունն ու կիրառումը ուսուցման ընթացքում՝ ըստ դասալսումների արդյունքների.

–դասերի արդյունավետության միջին գնահատականը՝ ըստ դասալսումների արդյունքների.

–ուսուցիչների դասավանդած 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում տրված գրավոր աշխատանքներից «Անբավարար» գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային գնահատականը.

–ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից և նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատականների տարբերության հաշվարկային միավորը:

Այս համատեքստում նշված 20 դպրոցներում դասալսումներ են իրականացվել **118**՝ հայոց լեզվի և գրականության **60** և մաթեմատիկայի **58** ուսուցիչների մոտ: Յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացվել է առնվազն 3 դասալսում:

Դասալսումների արդյունքում՝ **հայոց լեզվի 60 ուսուցիչներից** «Գերազանց» են գնահատվել 9-ը (**15%**), «Անբավարար»՝ 2-ը (**3%**), **մաթեմատիկայի 58 ուսուցիչներից** «Գերազանց» են գնահատվել 3-ը (**5%**), «Անբավարար»՝ 2-ը (**3%**):

Ուսուցիչների գնահատման միջին արդյունքները հայոց լեզվից 2.8 («Լավ»), իսկ մաթեմատիկայից՝ 2.3 («Բավարար») են, ստուգումների շրջանակում սովորողներին տրված գրավոր աշխատանքների գնահատման միջին արդյունքները հայոց լեզվից 5.9 («Բավարար») է, մաթեմատիկայից՝ 4.2 միավոր («Բավարար»):

Միաժամանակ նույն սովորողների նախորդ տարվա նույն առարկաների միջին տարեկան գնահատականները բարձր են. հայոց լեզվի դեպքում՝ 6.9 («Բավարար»), իսկ մաթեմատիկայի դեպքում՝ 6.6 միավոր («Բավարար»):

Դասալսումների և սովորողների գրավոր աշխատանքների որակական և քանակական արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած ընդհանուր առմամբ «Անբավարար» գնահատված դպրոցներ չկան, այնուամենայնիվ, դասավանդման և ուսումնառության գործընթացում առկա են որոշակի խնդիրներ:

Վերլուծության արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ **սովորողների առաջադիմությունը ուղիղ համեմատական է դասավանդման գործընթացի որակի հետ**:

Ըստ վերլուծության արդյունքների՝ առկա է հետևյալ ընդհանուր պատկերը.

– ուսումնական միջավայրի գնահատման միջին արդյունքը հայոց լեզվի դասերին կազմել է 3.4 («Լավ»), իսկ մաթեմատիկայի դասերին՝ 3.3 («Լավ») միավոր, սակայն որակական

վերլուծության արդյունքում պարզվել է, որ ուսումնական միջավայրը դպրոցներում բարելավման կարիք ունի՝ ուսումնաօժանդակ նյութերի բազմազանեցման, դրանք բոլոր սովորողների կարիքներին համապատասխանեցման, ՏՀՏ գործիքների կիրառման արդյունավետության բարձրացման, դասերի հստակ պլանավորման, ամբողջական փուլերով իրականացման և ժամանակի կառավարման ուղղություններով.

– «Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչը բարձր է գնահատվել հայոց լեզվի այն ուսուցիչների մոտ, որոնք համեմատաբար բարձր են գնահատվել ըստ *«Դասարանի և դասաժամի կառավարում» բնութագրիչի:* Հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնց դասերին բարձր է գնահատվել *հաղորդակցման մշակույթը*, համեմատաբար բարձր է գնահատվել նաև *դասարանի և դասաժամի կառավարումը*.

– մաթեմատիկայի դասաժամերին՝ ըստ «Ուսումնական նպաստավոր միջավայր» բաղադրիչի՝ համեմատաբար բարձր են գնահատվել այն ուսուցիչները, որոնք բարձր են գնահատվել ըստ «*Դասարանի կահավորանք*» բնութագրիչի: Միաժամանակ, համեմատաբար լավ *հաղորդակցվող* մաթեմատիկայի ուսուցիչների դասաժամերին լավ է նաև *դասարանի կահավորանքը*.

– դասավանդման գործընթացի գնահատման միջին արդյունքը հայոց լեզվի դասերին կազմել է 3.3 («Լավ»), իսկ մաթեմատիկայի դասերին՝ 3.2 («Լավ») միավոր, սակայն որակական վերլուծության արդյունքում պարզվել է, որ դասավանդումը դպրոցներում բարելավման անհրաժեշտություն ունի՝ դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդների կիրառման, նյութի ընկալման և տնային առաջադրանքների ստուգման ու գնահատման տարբեր տեսակների և մեթոդների, խրախուսման ձևերի արդյունավետ կիրառման, հետադարձ կապի ապահովման ուղղություններով.

– դասավանդողի կողմից կարողունակությունների ձևավորմանը նպաստող գործընթացի գնահատման միջին արդյունքը թե՛ հայոց լեզվի, թե՛ մաթեմատիկայի դասերին կազմել է 3 («Բավարար») միավոր, սակայն որակական վերլուծության արդյունքում պարզվել է, որ դպրոցն անհրաժեշտություն ունի վերանայելու և բարելավելու դասավանդման մեթոդաբանությունը քննադատական մտածողության և ինքնուրույնության ձևավորման համատեքստում.

– ըստ «Դասավանդում» բաղադրիչի՝ առավել բարձր են գնահատվել հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնք մեծ ուշադրություն են դարձնում նյութի ընկալման ստուգման և գնահատման վրա, մաթեմատիկայի այն ուսուցիչները, որոնք առավել ուշադրություն են դարձրել հետադարձ կապի ապահովման ուղղությամբ.

– հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնց դասերին բարձր է գնահատվել *նյութի ընկալման ստուգումն ու գնահատումը,* համեմատաբար բարձր է գնահատվել նաև *հետադարձ կապի ապահովումը:* Մաթեմատիկայի այն ուսուցիչները, *ովքեր համեմատաբար կարևորում են դասի խթանման գործընթացը՝ մեծ ուշադրություն են դարձնում նյութի ընկալման ստուգման և գնահատման գործընթացների վրա.*

– մաթեմատիկայի դասաժամերին «Կարողունակությունների ձևավորումը» համեմատաբար բարձր է գնահատվել այն ուսուցիչների մոտ, ովքեր բարձր են գնահատվել ըստ «Քննադատական և ստեղծագործական մտածողություն» բնութագրիչի: Բնութագրիչների գնահատման արդյունքներն էլ ցույց են տալիս, որ մաթեմատիկայի այն ուսուցիչները, ովքեր մեծ ուշադրություն են դարձնում սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման վրա՝ կարևորում են նրանց ինքնուրույնությունն ու համագործակցությունը.

– ուսուցիչների ՏՀՏ իմացության միջին գնահատականը հայոց լեզվի դասերին կազմել է 2.8, մաթեմատիկայի դասերին՝ 2.7 միավոր.

– հայոց լեզվի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների, կազմել է «Գերազանց»՝ 3 (15%), «Անբավարար»՝ 3 (15%) դպրոցներում.

– մաթեմատիկայի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների, «Գերազանց» չի գնահատվել ոչ մի դպրոցում, «Անբավարար» է գնահատվել 12 (60%) դպրոցներում.

– հայոց լեզվի թելադրությունից «Գերազանց» են գնահատվել գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների 15.7%-ը, «Անբավարար»՝ 22.8%-ը, մաթեմատիկայի գրավոր աշխատանքից՝ «Գերազանց»՝ 5.5%-ը, «Անբավարար»՝ 44.2%-ը.

– հայոց լեզվի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ գրավոր աշխատանքների և տարեկան գնահատականների համադրման արդյունքների, կազմել է «Գերազանց»՝ 3 (15%), «Անբավարար»՝ 1 (5%) դպրոցներում.

– մաթեմատիկայի ուսուցիչների միջին գնահատականն, ըստ գրավոր աշխատանքների և տարեկան գնահատականների համադրման արդյունքների, «Գերազանց» չի գնահատվել դպրոցներից ոչ մեկում, «Անբավարար» է գնահատվել՝ 9 (45%) դպրոցներում.

– հայոց լեզվի 60 ուսուցիչներից «Գերազանց» են գնահատվել 9-ը (15%), «Անբավարար»՝ 2-ը (3%): Մաթեմատիկայի 58 ուսուցիչներից «Գերազանց» են գնահատվել 3-ը (5%), «Անբավարար»՝ 2-ը (3%):

Ստուգումների շրջանակում տարրական դպրոցի սովորողների ընթերցելու և ընկալելու կարողությունների գնահատում է իրականացվել 18 դպրոցներում: Գնահատման նպատակը դպրոցներում ընթերցանության որակի բարձրացմանն աջակցելն է, մասնավորապես՝

1. տվյալների վրա հիմնված պատկեր ձևավորել այդ տարիքային խմբի սովորողների լուռ ընթերցանության հմտությունների վերաբերյալ,

2. գնահատման արդյունքները համադրել Համաշխարհային բանկի 2019 թվականի զեկույցում տեղ գտած արդյունքների հետ. պարզել, թե արդյոք սովորողների ընթերցանության հմտությունների փոփոխության միտումներ կան[2],

3. հնարավորինս բացահայտել այն գործոնները, որոնք ազդում են ընթերցանության հմտությունների ձևավորման վրա,

4. գնահատման քանակական և որակական արդյունքները հաշվետվությունների տեսքով ներկայացնել շահագրգիռ կողմերին («Մայրենի» առարկայի ուսուցիչներին, դպրոցների տնօրինությանը, կրթության քաղաքականություն մշակողներին)՝ իրավիճակը բարելավելու գործողություններ ձեռնարկելու ակնկալիքով:

Գնահատման արդյունքում պարզվել է, որ սովորողների 47.7 տոկոսը ձախողել է թեստը՝ հարցերի կեսից ավելիին տալով սխալ պատասխաններ: Այս ցուցանիշը Համաշխարհային բանկի կողմից արձանագրած 35 տոկոս ֆունկցիոնալ անգրագիտության ցուցանիշից էլ ցածր է: «Բավարար» գնահատական է ստացել սովորողների 28.8 տոկոսը՝ ճիշտ պատասխանելով հարցերի 51-ից 75 տոկոսին: Սովորողների 19 տոկոսը ստացել է «լավ» գնահատական՝ հարցերի 76-ից 90 տոկոսի դեպքում տալով ճիշտ պատասխաններ: Եվ վերջապես, «գերազանց» է ստացել սովորողների ընդամենը 4.5 տոկոսը՝ հարցերի 91-ից 100 տոկոսի դեպքում տալով ճիշտ պատասխաններ:

Ընթերցանության ամենաբարձր միջին տոկոսային միավորն արձանագրվել է Լոռու մարզում սովորող 4-րդ դասարանցիների շրջանում, իսկ ամենացածրը՝ Արմավիրի մարզում սովորողների շրջանում (համապատասխանաբար 60.2% և 49.3%): Ավելին, ի տարբերություն մյուս ՀՀ վարչատարաշքային միավորների, Արմավիրում 4-րդ դասարանցիները միջինում չեն հաղթահարել դրական միավորի նվազագույն շեմը: Բացի այդ, Լոռու և Շիրակի մարզերի սովորողների միջին ցուցանիշները բարձր են ընտրանքի միջին ցուցանիշից, իսկ Արմավիրի, Տավուշի, Վայոց ձորի մարզերինը, ինչպես նաև Երևան քաղաքինը՝ ցածր:

Ձեռնարկված միջոցառումները՝

Դպրոցներում իրականացված գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունները՝ սովորողների առաջադիմության և դասավանդման արդյունավետության բարձրացմանը միտված առաջարկներով, տրամադրվել են դպրոցների տնօրեններին:

Առաջարկները հիմնականում վերաբերել են ուսումնական նպաստավոր միջավայրի և դասավանդման գործընթացի բարելավմանը, սովորողների ինքնուրույնության, համագործակցության, քննադատական և ստեղծագործական մտածողության զագացմանը նպաստող կարողունակությունների ձևավորմանը:

[2] Համաշխարհային բանկն արձանագրում է, որ ՀՀ- ում 4-րդ դասարանցիների 35 տոկոսը դժվարանում է իր տարիքին համապատասխան պարզ տեքստեր կարդալ և ընկալել: Տե՛ս՝
World Bank. (2019). Armenia: Learning poverty brief. Retrieved from https://thedocs.worldbank.org/en/doc/579611571223408189-0090022019/original/ECAECCSCARMLPBRIEF.pdf:

ՀՀ 20 դպրոցներում իրականացված ԱՈՒԿ ծրագրի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվել է ԿԳՄՍ նախարարին, հրապարակվել է ԿՏՄ պաշտոնական կայքում. http://www.eib.am/reports/: Սովորողների ընթերցանության գնահատման արդյունքների վերլուծությունը ևս հրապարակվել է ԿՏՄ պաշտոնական կայքում. http://www.eib.am/reports/:

2.2. ՀՀ 1 նախնական և 2 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ

Հիմքը՝

ԿՏՄ 2022 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանները:

Ժամկետը՝

2022 թվականի IV եռամսյակ:

Ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝

Աբովյանի կրթահամալիր՝ *2020 թվականի մարտի 9-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 27-ը ներառյալ,*

Գյումրու պետական տեխնիկական քոլեջ (մ/մ)՝ *2019 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 13-ը ներառյալ,*

Վանաձորի պետական բժշկական քոլեջ (մ/մ)՝ *2019 թվականի դեկտեմբերի 12-ց մինչև 2022 թվականի դեկտեմբերի 9-ը ներառյալ:*

Ստուգման արդյունքները՝

2022 թվականի IV եռամսյակում ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացրել 1 նախնական մասնագիտական (արհեստագործական) և 2 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (***Աբովյանի կրթահամալիր, Գյումրու պետական տեխնիկական քոլեջ, Վանաձորի պետական բժշկական քոլեջ):***

Ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումներն, ըստ բնույթների, ներկայացված են աղյուսակ 7-ում.

Աղյուսակ 7

N	*Խախտման բնույթը*	*Հաստատությունների թիվը*	*Հաստատության անվանումը*
Տնօրենի ոչ իրավաչափ գործունեություն			
1.	*Ներքին գնահատման գործընթաց*	*1*	*Գյումրու պետական տեխնիկական քոլեջ*
2.	*Դիմորդների ընդունելության գործընթաց*	*3*	*Աբովյանի կրթահամալիր, Գյումրու պետական տեխնիկական քոլեջ, Վանաձորի պետական բժշկական քոլեջ*
3.	*Պետական նմուշի ավարտական փաստաթղթերի բաշխման գործընթաց*	*2*	*Աբովյանի կրթահամալիր, Վանաձորի պետական բժշկական քոլեջ*

4.	***Ամփոփիչ քննությունների անցկացման գործընթաց***	***1***	***Վանաձորի պետական բժշկական քոլեջ***
5.	***Պետական փաստաթղթերի ներկայացման ժամկետներ***	***1***	***Վանաձորի պետական բժշկական քոլեջ***
6.	***Դասախոսների վերապատրաստման գործընթաց***	***1***	***Աբովյանի կրթահամալիր***
Խորհրդի ոչ իրավաչափ գործունեություն			
7.	***Խորհրդի նիստերը գումարվել են սահմանված ժամկետի խախտմամբ***	***1***	***Գյումրու պետական տեխնիկական քոլեջ***

Ստուգումների արդյունքում արձանագրվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների հետևյալ խախտումները (Աղյուսակ 8).

Աղյուսակ 8

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ	***Հաստատության անվանումը***
«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք	
18.1-րդ հոդվածի 21-րդ մասի 1-ին կետ. *«Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը՝ խորհրդի քննարկմանն է ներկայացնում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը...»:*	***Գյումրու պետական տեխնիկական քոլեջ***
ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 8-ի № 752-Ն որոշման հավելվածով հաստատված «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու» կարգ	
7-րդ կետ. *«ՄՄՈՒՀ-ը յուրաքանչյուր տարի, մինչև ապրիլի 1-ը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն գրավոր ներկայացնում է այն մասնագիտությունների ցանկը, որոնցով հավակնորդը կարող է շարունակել կրթությունը բուհում»:*	***Վանաձորի պետական բժշկական քոլեջ***
10-րդ կետ.*«Հավակնորդը բուհ տեղափոխվելու մասին դիմումը ՄՄՈՒՀ-ի ղեկավարին է ներկայացնում պետական ամփոփիչ ստուգման քննաշրջանից առնվազն 10 օր առաջ՝ նշելով նախընտրած բուհը և նախընտրելի մինչև 2 մասնագիտություն՝ առաջին հայտի գերակայության սկզբունքով»:*	
ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 124-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ	
13-րդ կետ. *«Խորհրդի նիստերը գումարվում են Հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում՝ Խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված մարմնի, Հաստատության տնօրենի կամ Խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ»:*	***Գյումրու պետական տեխնիկական քոլեջ***

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. ապրիլի 5-ի N 254-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգ	
9-րդ կետ. *«Ընդունելության գործընթացը կազմակերպելու նպատակով՝ Լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) կամ հեռակա ընդունելության տեղերը հատկացվելուց հետո՝ 5 օրվա ընթացքում Հաստատությունում տնօրենի (ռեկտորի) հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմ»:*	***Աբովյանի կրթահամալիր, Գյումրու պետական տեխնիկական քոլեջ, Վանաձորի պետական բժշկական քոլեջ***
47-րդ կետ. *«Ընդունող հանձնաժողովի համապատասխան որոշման և լրիվ ձևակերպված անձնական գործի հիման վրա Հաստատության տնօրենը մրցույթով անցած դիմորդներին 2 աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրում է որպես ուսանող: Հրամանագրվածների ցուցակները հրապարակվում են ոչ ուշ, քան հրամանագրման հաջորդ օրը»:*	
ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հուլիսի 21-ի № 638-Ն հրամանով հաստատված՝ «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման» կարգ	
13-րդ կետ. *«Պետական որակավորող հանձնաժողովների աշխատանքները կազմակերպվում են մասնագիտական ուսումնական հաստատության տվյալ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում»:*	***Վանաձորի պետական բժշկական քոլեջ***
16-րդ կետ. *«Տվյալ մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգումների միջև եղած ժամանակահատվածը սահմանվում է 5-7 օր»:*	
ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014թ. հոկտեմբերի 29-ի № 1058-Ն հրամանի հավելված 1-ով հաստատված՝ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման» կարգ	
10-րդ կետ. *«Մանկավարժական աշխատողների յուրաքանչյուր անդամ առնվազն հինգ տարին մեկ անգամ ենթակա է վերապատրաստման»:*	***Աբովյանի կրթահամալիր***
ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հունիսի 22-ի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերը հաստատելու մասին» №609-Ն հրամանի հավելված 2	
22-րդ կետ. *«Դիպլոմների բաշխումից հետո պետական և ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենը հաշվետվություն է ներկայացնում գրությամբ՝ նախարարի կամ աշխատակազմի ղեկավարի անունով: Հաշվետվությունն իր մեջ ներառում է տեղեկատվություն ստացած, բաշխված և խոտանված ավարտական փաստաթղթերի համարների և ընդհանուր քանակի մասին՝ ըստ ուսումնական հաստատության, նշումներ պարունակելով սովորողի անվան, ազգանվան, հայրանվան, սեռի, ծննդյան թվականի, ուսումնական հաստատություն ընդունվելու (հրամանի համար) և ավարտելու (հրամանի համար) տարեթվերի, ավարտական փաստաթղթի սերիայի և համարի, անձնագրի սերիայի և համարի, մասնագիտության կոդի մասին՝ կնքված և ստորագրված տնօրենի կողմից: Հաշվետվությունները նախարարություն են ներկայացվում մինչև ընթացիկ տարվա ավարտը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով: Դրանք 5 աշխատանքային օրվա*	***Աբովյանի կրթահամալիր***

ընթացքում աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժնի կողմից ստուգվում են և հանձնվում նախարարության արխիվ: Թերություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում՝ հաշվետվություն ներկայացնողին հնարավորություն է ընձեռվում շտկելու կամ վերացնելու դրանք 5 աշխատանքային օրվա ընթացքում»:	

Ըստ ստուգաթերթերի՝ ստուգումների արդյունքներն ունեն հետևյալ պատկերը (Աղյուսակ 9).

***Աղյուսակ* 9**

հհ	***Հաստատության անվանումը***	***Ստուգաթերթերի կշռային միավորներ***									
		01	***02***	***03***	***04***	***05***	***06***	***07***	***08***	***09***	***Ընդամենը***
1.	***Աբովյանի կրթահամալիր***	***-***	***-***	***0.5***	***-***	***1***	***-***	***-***	***-***	***1***	***2.5***
2.	***Գյումրու պետական տեխնիկական քոլեջ***	***1***	***1***	***0.5***	***-***	***-***	***-***	***-***	***-***	***-***	***2.5***
3.	***Վանաձորի պետական բժշկական քոլեջ***	***-***	***-***	***0.5***	***1***	***2***	***-***	***-***	***-***	***-***	***3.5***
Գումարային ռիսկային միավոր		***1***	***1***	***1.5***	***1***	***3***	***-***	***-***	***-***	***1***	***8.5***
Միջինացված ռիսկային միավոր		***0.3***	***0.3***	***0.5***	***0.3***	***1***	***-***	***-***	***-***	***0.3***	***2.8***
Ստուգաթերթի ռիսկային միավորի %-ը		***1.4***	***0.8***	***3.1***	***6***	***3.7***	***-***	***-***	***-***	***7.5***	***1.9***

Համաձայն աղյուսակ 9-ի տվյալների՝

- ստուգված բոլոր **3** հաստատություններում խախտումներ են արձանագրվել ընդունելության կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների ***(N03 ստուգաթերթ)*** արդյունքում.

- պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման և շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների ***(N05 ստուգաթերթ)*** արդյունքում խախտումներ արձանագրվել են ***Աբովյանի կրթահամալիրում*** *և* ***Վանաձորի պետական բժշկական քոլեջում.***

- ***N 01*** (կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման և տնօրենի ընտրության կարգերի պահանջների) և ***N 02*** (տնօրենին և կրթության կազմակերպմանը ներկայացվող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների) ստուգաթերթով իրականացված ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել միայն ***Գյումրու պետական տեխնիկական քոլեջում.***

- ***N 09*** (դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կարգերի պահանջների) ստուգաթերթով իրականացված ստուգումների արդյունքում խախտումներ արձանագրվել են ***Աբովյանի կրթահամալիրում,*** իսկ ***N 04*** (միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում բարձր առաջադիմություն ցուցաբերած

շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու վերաբերյալ կարգի պահանջների) ստուգաթերթով իրականացված ստուգումների արդյունքում խախտումներ արձանագրվել են ***Վանաձորի պետական բժշկական քոլեջում.***

- ***N 07*** (նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում հեռավար, դրսեկությամբ, վարպետային և մեկից ավելի ուսուցման կարգերի պահանջների կատարմանն ուղղված) ստուգաթերթը կիրառվել է բոլոր 3 հաստատություններում և ըստ ստուգաթերթի տվյալների հաստատություններում խախտումներ չեն արձանագրվել, քանի որ համապատասխան գործընթացները հաստատություններում չեն իրականացվել, իսկ ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու ***(N06 ստուգաթերթ)*** և սովորողների ակադեմիական արձակուրդում գտնվելու, տեղափոխման և վերականգնման կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում ***(N08 ստուգաթերթ)*** խախտումներ չեն արձանագրվել, քանի որ նշված գործառույթներն հաստատություններում իրականացվել են սահմանված կարգերի պահանջներին համապատասխան.

- ըստ ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկային միավորների միջինացված տվյալների՝ առավել ռիսկային է պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման և շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման գործընթացները.

- ըստ ռիսկայնության երկրորդ տեղում (ըստ ռիսկայնության միջին միավորի) է հաստատություններում ուսանողների ընդունելության գործընթացը: Ինչը նշանակում է, որ ստուգված հաստատություններում խնդրահարույց է նաև ուսանողների ընդունելության՝ *ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը:*

Այսպիսով, նախնական մասնագիտական կրթության ոլորտում իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների **5**, իսկ միջին մասնագիտական կրթության ոլորտում **10** խախտումներ:

Նախնական մասնագիտական կրթության ոլորտի օրենսդրության պահանջների **5** խախտումներից **1**-ի հետևանքների վերացման նպատակով ԿՏՄ ղեկավարի կողմից տրվել է կատարման համար պարտադիր **1** հանձնարարական, իսկ միջին մասնագիտական կրթության ոլորտի բոլոր **10** խախտումների հետևանքները հնարավոր չէ վերացնել՝ ժամկետանց լինելու պատճառով:

Ամփոփվել են կրթական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետության ապահովման նպատակով 5 ստուգումների շրջանակում (ըստ նախապես ընտրված մասնագիտությունների) իրականացված կրթական գործընթացի որակի գնահատվման արդյունքները:

Կրթության որակի գնահատման տվյալների վերլուծության արդյունքում առանձնացվել են այն խնդիրները, որոնք կարող են ազդել նախնական և միջին մասնագիտական հաստատություններում մրցունակ մասնագետների պատրաստման որակի վրա: Ըստ գնահատման արդյունքների համադրման ու վերլուծության, ձևաթղթերի և հարցաթերթերի տվյալների՝ հաստատություններում առկա են գործընթացներ, որոնց արդյունավետությունը նկատելի է (ուժեղ կողմեր), սակայն միաժամանակ առկա են գործընթացներ, որոնք ունեն բարելավման անհրաժեշտություն (զարգացման ենթակա գործառույթներ).

– տվյալ մասնագիտության նյութատեխնիկական բազայի բարելավումը,

– տվյալ մասնագիտության բարձր առաջադիմություն ունեցող սովորողների տոկոսային թվի աճը,

– հաստատության կողմից տրամադրվող մասնագիտական գրականությունը (այդ թվում՝ էլեկտրոնային) սովորողներին հասանելի լինելը,

– մասնագիտական առարկաներից մանկավարժների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման գործընթացի արդյունավետ կազմակերպումը,

– կարիերայի կենտրոնի հետ արդյունավետ համագործակցությունը,

– պրակտիկայի արդյունավետության բարձրացումը,

– ավարտական պրակտիկաների արդյունքում շրջանավարտներին աշխատանքի տեղավորումը տվյալ գործընկերոջ մոտ,

– սոցիալական գործընկերների (գործատուների) ակտիվ ներգրավումը հաստատության պետական որակավորման հանձնաժողովի կազմում,

– կրթական գործընթացում սոցիալական գործընկերների ակտիվ ներգրավումը,

– տվյալ ոլորտում զբաղվածության վերաբերյալ սովորողներին պարբերաբար տեղեկություններ տրամադրելը:

Այսինքն՝

– ուսանողների առաջադիմության քանակական դինամիկայի առկա միջին արդյունքներն ավարտական կուրսերում, պրակտիկայի ընթացքում, վկայում են հաստատություններում կրթության բարելավման անհրաժեշտության մասին, միաժամանակ՝ մասնագիտական առարկաներից վերապատրաստված մանկավարժների տոկոսային թվի՝ ցածր և միջին արդյունքների առկայությունը կարող է խոչընդոտել ուսանողների առաջադիմության էլ ավելի բարձրացմանը:

– սոցիալական գործընկերների կողմից աշխատանքի ընդունված և իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների՝ հիմնականում միջին և ցածր արդյունքները, գործընկերների գնահատականներն ու առաջարկները վկայում են այն մասին, որ սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերն ու միջոցառումները վերանայման կարիք ունեն:

– հաստատություններում ապահովված է սովորողների անվտանգությունը, ծառայությունների տրամադրումը, ռեսուրսների հասանելիությունը, սակայն առկա է մասնագիտական գրականության, ՏՏ բազայի թարմացման անհրաժեշտություն:

– սովորողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները, մեխանիզմները վերանայման և բարելավման կարիք ունեն:

– դասավանդումից և պրակտիկայից սովորողների բավարարվածության միջին արդյունքները վկայում են հաստատությունում որակյալ մասնագետ պատրաստելու ներուժի մասին:

– սոցալական գործընկերների հետ հաստատությունների համագործակցության մեխանիզմները վերանայման և լավարկման կարիք ունեն:

Ձեռնարկված միջոցառումներ՝

ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ արձանագրվել են հաստատություններում, կազմվել է 3 ակտ, հանձնարարական է տրվել 1 հաստատության տնօրեն: Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ հաստատությունների տնօրեններին տրամադրվել են ակտերի մեկական օրինակները: ԿԳՄՍ նախարարությանը տրամադրվել են ակտերի պատճենները: ՀՀ ԿԳՄՍ նախարարին առաջարկվել է քննարկել ստուգման արդյունքները և տեղյակ պահել ԿՏՄ-ին:

Միաժամանակ ԿԳՄՍ նախարարին գրությամբ առաջարկվել է՝ *ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ» №48-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետից («Հաստատությունում Մրցույթ չի հայտարարվում և Թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝ … առաջացած ժամերը հատկացվել են համատեղությամբ աշխատող* ***Մանկավարժին՝*** *պայմանագրում նշելով, որ աշխատանքը կատարվում է համատեղությամբ») հանել «աշխատող Մանկավարժին» պահանջը՝ մասնագիտական առարկաների համար:*

Հաստատություններում իրականացված գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունները՝ զարգացման ենթակա գործառույթների բարելավմանը միտված առաջարկներով, տրամադրվել են հաստատությունների տնօրեններին: Առաջարկները հիմնականում վերաբերել են ուսանողների իրազեկմանը, ինքնուրույնության և ակտիվության խրախուսմանը, դասավանդողների կողմից սովորողներին անհատական մոտեցում ցուցաբերելու պատրաստակամության բարձրացմանը, տվյալ ոլորտում զբաղվածության վերաբերյալ սովորողներին պարբերաբար տեղեկություններ տրամադրելուն, մասնագիտական առարկաներից մանկավարժների վերապատրաստման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, կարիերայի կենտրոնի հետ արդյունավետ

համագործակցությանը, կրթական գործընթացում սոցիալական գործընկերների ակտիվ ներգրավմանը և այլն:

3. Հետադարձ կապ

3.1. ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում ԿՏՄ ղեկավարի կարգադրագրերով տրված հանձնարարականների և հաստատություններից 2022 թվականի IV եռամսյակում ստացված կատարողականների համադրման արդյունքներ

2022 թվականի IV եռամսյակը, որպես հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ, սահմանվել է **16** դպրոցների **38** հանձնարարականների դեպքում: **16** դպրոցներից **2**-ը *(Երևանի հ. 80 հիմնական և Ամասիայի միջնակարգ դպրոցներ՝ 6 հանձնարարական)* հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկատվություն չեն ներկայացրել, մնացած **14** դպրոցներից հանձնարարականների կատարման վերաբերյալ գրությունները ստացվել են սահմանված ժամկետներում:

Ըստ դպրոցներից ստացված գրությունների՝ **32** հանձնարարականներից կատարվել են **15-ը (47%),** կատարվել են մասամբ՝ **9-ը (28%),** չի կատարվել՝ **8-ը (25%):**

Հանձնարարականների և ստացված կատարողականների համադրման արդյունքներն՝ ըստ դպրոցների, ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

Հանձնարարականների և կատարողականների համադրման արդյունքներ՝ ըստ դպրոցների							
N	***Դպրոցի անվանումը***	***Տնօրենին տրված կարգադրագիր***			***Տնօրենից ստացված կատարողական***		
		Կադրեր	***Ուսպլան***	***Այլ***	***Կադրեր***	***Ուսպլան***	***Այլ***
1.	***Երևանի հ. 21 հ/դ***	***2***		***1***	***2***		***1***
2.	***Երևանի հ. 53 հ/դ***			***4***			***4***
3.	***Լերմոնտովոյի մ/դ***	***1***			***1****		
4.	***Չկալովի հ/դ***	***2***		***1***	***2****		***1****
5.	***Մեծավանի հ. 1 հ/դ***		***1***			***1***	
6.	***Վանաձորի հ. 8 հ/դ***	***1***			***1***		
7.	***Արմավիրի հ. 2 հ/դ***		***1***	***1***		***1****	***1****
8.	***Խաչիկի մ/դ***	***1***			***1***		
9.	***Սարավանի հ/դ***	***5***			***5****		
10.	***Եղեգնաձորի հ. 2 հ/դ***		***2***	***1***		***1*+1****	***1***
11.	***Զառիթափի մ/դ***	***2***		***1***	***2****		***1***

12.	*Ծաղկուտի մ/դ*	*1*			*1***		
13.	*Գյումրու հ. 32 հ/դ*			*2*			*2*
14.	*Դիլիջանի մ/դ*	*1*		*1*	*1**		*1*
Ընդամենը		*16*	*4*	*12*	*4+8*+4***	*1+1*+2***	*10+2***
		32			*15+9*+8***		

**մասամբ կատարված, ** չկատարված*

32 հանձնարարականներից 16-ը վերաբերել են կադրային նշանակումներին, 4-ը՝ ուսումնական պլանին, 4 հանձնարարականներ՝ տնօրենի պաշտոնային պարտականություններին, 2՝ սովորողների համակազմին և 1-ական հանձնարարականներ մանկավարժական խորհրդի, մեթոդմիավորումների, ծնողական խորհրդի գործունեությանը, վարչական աշխատողի ուսումնական ծանրաբեռնվածությանը, սոցմանկավարժի պաշտոնային պարտականությանը և օլիմպիադայի անցկացման գործընթացին: Մասամբ են կատարվել կադրային նշանակումներին վերաբերող 8 և ուսումնական պլանին վերաբերող 1 հանձնարարականները:

Մանկավարժական աշխատողների նշանակման վերաբերյալ հանձնարարականների կատարումը՝ ըստ ներկայացված կատարողականի՝ մասամբ կատարված է համարվել այն դեպքերում, երբ

- անձն ազատվել է աշխատանքից, սակայն թափուր տեղը տվյալ պահին համալրված չէ,
- թափուր տեղի համար պարբերաբար հայտարարվող մրցույթները դեռևս չեն համալրվում:

Հանձնարարականների և ստացված կատարողականների համադրման արդյունքներն, ըստ դպրոցների, ներկայացվել են 2022 թվականի IV եռամսյակում ԿՏՄ կողմից հանրակրթության ոլորտում իրականացված ստուգումների և տնօրենների կողմից ներկայացված կատարողականների համադրման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունում *(http://eib.am/hy/report):*

3.2. Վերստուգումներ

2022 թվականի սեպտեմբերի 22-ից 27-ը Երևանի, ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Տավուշի մարզերի 7 հանրակրթական և 17 նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացվել են վերստուգումներ՝ ԿՏՄ կողմից 2021 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված կամ չկատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելու նպատակով: Արդյունքները ամփոփվել են 2022 թվականի IV եռամսյակում:

Վերստուգումների արդյունքում պարզվել է, որ 17 մանկապարտեզների և 7 հանրակրթական դպրոցների տնօրենների կողմից չկատարված կամ մասամբ կատարված

համապատասխանաբար 55 և 10 հանձնարարականներից կատարվել են մանկապարտեզի տնօրեններին տրված 27(49%) և դպրոցի տնօրեններին տրված 8(80%) հանձնարարականներ: Ընդհանուր թվով 65 հանձնարարականներից կատարվել են 35-ը՝ (54%):

Վերստուգումների արդյունքում **17** մանկապարտեզներից 11-ում և 7 հանրակրթական դպրոցներից 2-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է **13** ակտ, իսկ 6 մանկապարտեզներում և 5 հանրակրթական դպրոցներում խախտումներ չեն արձանագրվել, ուստի կազմվել են տեղեկանքներ:

Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի կողմից համապատասխան կարգադրագրերով՝ 11 (65%) մանկապարտեզների տնօրեններին տրվել են 26, իսկ 2 (29%) հանրակրթական դպրոցների տնօրեններին ՝ 2 **հանձնարարականներ:**

Կարգադրագրերի պատճենները տրամադրվել են համայնքների ղեկավարներին կամ մարզպետներին:

Վերստուգման ընթացքում **11** մանկապարտեզներում արձանագրվել են ընդհանուր թվով **27 խախտումներ**, որոնցից **26-ի վերաբերյալ տրվել են հանձնարարականներ, իսկ 1 խախտման վերաբերյալ հանձնարարական չի տրվել,** քանի որ արդեն իսկ ապահովված է եղել մանկավարժական աշխատողի՝ պահանջվող աշխատանքային ստաժը:

Հանրակրթական 2 դպրոցներում արձանագրվել են 2 խախտումներ՝ տրվել են 2 հանձնարարականներ:

Կատարողականների համադրման և վերստուգումների արդյունքում իրականացվել է համապատասխան ուսումնական հաստատությունների ռիսկերի վերագնահատում՝ համաձայն ՀՀ կառավարության 22.08.2019թ. «Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 1153-Ն որոշման 40-44-րդ կետերի:

2022 թվականի IV եռամսյակում 2021 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ ԿՏՄ ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված կամ չկատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելու նպատակով ստուգումներ են իրականացվել ՀՀ 5 նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող (1 հաստատության դեպքում հանձնարարականներից 1-ը տրված է եղել 2022 թվականին դիմում-բողոքի հիման վրա իրականացված ստուգման արդյունքում), 18 նախադպրոցական, 23 հանրակրթական ուսումնական հասատություններում:

ՀՀ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում իրականացված 5 ստուգումներից 2-ի արդյունքում («Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ և «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ) դեպքում կազմվել է տեղեկանք, 3-ի դեպքում՝ ակտ: Վերստուգումների արդյունքում **5** հասատություններում արձանագրված **14** խախտումներից (12-ը՝ կադրային նշանակումներին և 1-ական խախտումներ սովորողների վճարովի/անվճար տեղաբաշխմանը և մանկավարժական աշխատողների վերապատրաստմանը վերաբերող) շտկվել են **11**-ը (9-կադր և 2-ը այլ):

Խախտումների հետևանքները վերացնելու նպատակով քոլեջի տնօրեններին (ժամանակավոր պաշտոնակատարին) տրվել են հանձնարարականներ՝ համաձայն ԿՏՄ ղեկավարին փոխարինողի՝ կարգադրագրերի:

Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների արդյունքները ամփոփման փուլում են: Դրանք կներկայացվեն 2023 թվականի I եռամսյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունում:

3.3. Լիազոր մարմինների կողմից կիրառված պատասխանատվության միջոցներ

2022 թվականին ԿՏՄ կողմից իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում լիազոր մարմինների կողմից ուսումնական հաստատությունների տնօրենների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր: Մասնավորապես (Աղյուսակ 11).

Աղյուսակ 11

N	*Ուսումնական հաստատության անվանումը*	*Պաշտոնը*	*Կիրառված կարգապահական տույժը*
1.	*ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ*	*Տնօրեն*	*Նկատողություն*
2.	*ՀՀ Գեղարքունիքի մարզի «Վաղաշեն գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*	*Տնօրեն*	*Խիստ նկատողություն*
3.	*ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ*	*Տնօրեն*	*Նկատողություն*
4.	*ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի Ա. Բակունցի անվան հ.1 ավագ դպրոց» ՊՈԱԿ*	*Տնօրեն*	*Նկատողություն*

4. Դիմումներում, բողոքներում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում

Նպատակը՝

ԿՏՄ հանրությունից ստացվող բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու մասին կարգի պահանջների ապահովում:

Ժամկետը՝

2022 թվականի IV եռամսյակ:

Տեղեկատվություն ստացված դիմումների, բողոքների վերաբերյալ

2022 թվականի IV եռամսյակում ԿՏՄ-ում ստացվել են 17 դիմում-բողոքներ 12 ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ: Ստացված դիմում–բողոքներից 14-ը վերաբերել են դպրոցների, 1-ը՝ մանկապարտեզի գործունեությանը, իսկ 2-ը եղել են այլ բնույթի:

Ըստ դիմում–բողոքներում բարձրացված հարցերի՝

- 1 դիմում-բողոքի արդյունքում ***(ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի թիվ 1 հ/դ)*** իրականացվել է ստուգում, որի արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել,
- 8-ը վերահասցեագրվել են,
- 1-ը մասամբ է վերահասցեագրվել՝ դիմումում բարձրացված հարցերի մի մասը ԿՏՄ լիազորությունների շրջանակից դուրս լինելու պատճառով, իսկ մյուս մասի դեպքում իրականացվել է վաչական վարույթ, որի արդյունքում հատնաբերվել են ՀՀ օրենսդրական պահանջների խախտումներ,
- 5-ը կարճվել են,
- 1-ի դեպքում **(Երևանի թիվ 186 ա/դ)** իրականացվել է ուսումնասիրություն,
- 1-ի դեպքում ***(ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի թիվ 5 հ/դ)*** իրականացվել է վարչական վարույթ, որի արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Դիմում-բողոքներից 5-ը՝ 29% վերաբերել են տնօրենի կողմից թույլ տված անօրինականություններին և անարդյունավետ աշխատանքին, 4-ը՝ 24%՝ մանկավարժին ոչ վայել պահվածքին: Բարձացված հարցերը վերաբերել են նաև սովորողների նկատմամբ հոգեբանական ճնշման գործադրմանը, դրամահավաքությանը, ուսուցչի և տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացման կարգին և այլն:

5. Կանխարգելիչ, աջակցման և խորհրդատվական միջոցառումներ

Հիմքը՝

ԿՏՄ 2022 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանները:

Նպատակը՝

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջների կատարում:

Ձեռնարկված միջոցառումներ

2022 թվականի IV եռամսյակում՝ ՀՀ 6 հանրակրթական և 39 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնակցությամբ ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է 8 իրազեկման, խորհրդատվական միջոցառում (2 հեռավար, 6 հանդիպում):

Մասնավորապես.

<u>Հանրակրթության ոլորտում՝</u>

ԿՏՄ հանրակրթության վարչության աշխատակիցների կողմից իրականացվել են հանդիպումներ ՀՀ Արմավիրի մարզի 6 ավագ դպրոցների սովորողների և ծնողների հետ՝ նրանց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովման նպատակով:

Խորհրդատվությունների ընթացքում ներկայացվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ ծնողների և սովորողների իրավունքներին և պարտականություններին վերաբերող դրույթները:

Ծնողների կողմից հնչեցրած հարցերը վերաբերել են դպրոցի կառավարման գործընթացին ծնողների մասնակցության իրավունքին և սովորողների համար կրթաթոշակի սահմանման կարգին:

<u>Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում (այսուհետ նաև՝ ՆՄՄԿ)</u>՝

ՆՄՄԿ վարչության աշխատակիցների կողմից իրականացվել է 2 (հեռավար) խորհրդատվական, իրազեկման միջոցառում 39 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ՝ իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացման, հնարավոր խախտումների կանխարգելման, ոլորտում առկա խնդիրների կարգավորման, կրթության բնագավառը կարգավորող նոր ընդունված իրավական ակտերի, հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների, լրացումների վերաբերյալ իրազեկում ապահովելու նպատակով:

Խորհրդատվությունների ընթացքում ներկայացվել են ՆՄՄԿ բնագավառը կարգավորող իրավական ակտերում վերջին շրջանում կատարված հետևյալ փոփոխությունները՝

–ՀՀ կառավարության 04.11.2021թ. № 1784-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ հատկացնելու, վարձը փոխհատուցելու և կրթաթոշակ սահմանելու կարգ»,

–ՀՀ ԿԳ նախարարի 24.02.2011թ. № 124-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգ» (փոփ.՝ 07.12.2021թ. № 83-Ն),

–ՀՀ կառավարության 11.02.2021թ. № 154-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգ»,

–ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.12.2020թ. № 48-Ն հրամանով հաստատված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ» (փոփ.՝ 06.12.2021թ. № 82-Ն):

Տնօրենների կողմից հնչեցրած հարցերը վերաբերել են պարտադիր կրթությունից դուրս մնացած ուսանողի մասին տեղեկություն չունենալու դեպքին, ուսանողների նպաստի փոխհատուցմանը և արվեստի (պարուսույց, ռեժիսոր) մասնագիտությունների թափուր տեղերի համալրման կարգին:

6. Օրենսդրական առաջարկների մասին տեղեկատվություն

ԿՏՄ կողմից իր նախաձեռնությամբ կամ այլ պետական մարմինների առաջարկներով լրամշակման առաջարկություններ և նկատառումներ են ներկայացվել մի շարք նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ: Մասնավորապես՝

ԿՏՄ կողմից այլ պետական մարմինների առաջարկներով լրամշակման առաջարկություններ և նկատառումներ են ներկայացվել մի շարք նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ: Մասնավորապես՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

- «Նախադպրոցական կրթության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի,
- ««Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի,
- ՀՀ կառավարության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության համակարգողի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման և նշանակման կարգը հաստատելու մասին» որոշման,
- ՀՀ կառավարության «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի հերթական ատեստավորման կարգը հաստատելու և տարածքային հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը սահմանելու մասին» որոշման,
- ՀՀ կառավարության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման (հավելված),
- ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման (հավելված),

- ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման (հավելված),

- ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 12-ի № 154-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման (Նախագիծ) և որոշման հավելվածի,

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի № 395-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի և հրամանի հավելվածի,

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի № 396-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի և հրամանի հավելվածի,

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման կարգը սահմանելու մասին» հրամանի,

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 1144-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հրամանի,

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 20-ի N 09-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հրամանի (հավելված) նախագծերի վերաբերյալ:

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի լրամշակված տարբերակի նախագծի վերաբերյալ:

ԿՏՄ նախաձեռնությամբ ԿԳՄՍ նախարարությանը առաջարկություն է ներկայացվել ՀՀ հիմնադրամների՝ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթական գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

7. Ստուգվող հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ մշակված ձևաթղթի

2022 թվականի IV եռամսյակում ևս հանրակրթության ոլորտում իրականացված ստուգումների շրջանակում ԿՏՄ-ն կիրառել է հանրակրթական ուսումնական հաստատության

(դպրոցի) ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթուղթը (այսուհետ նաև՝ ձևաթուղթ):

Ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթղթի հիման վրա հավաքագրված տվյալների վերլուծության արդյունքում վեր են հանվել այն խնդիրները, որոնք կարող են ազդել՝ յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովմանը:

Ստուգված 54 դպրոցներից 36-ում սովորում են ինտելեկտուալ, հենաշարժական, ձայնի, խոսքի խնդիրներ ունեցող 435 երեխաներ, որոնցից 292-ն ունեն միայն ինտելեկտուալ, 25-ը՝ միայն հենաշարժական, 59-ը՝ միայն ձայնի, խոսքի, լսողության, իսկ 5-ը՝ և՛ ինտելեկտուալ և՛ հենաշարժական, 56-ը՝ և՛ ինտելեկտուալ, և՛ձայնի, խոսքի, լսողության, 2-ը՝ և՛ ինտելեկտուալ և՛ հենաշարժական և՛ձայնի, խոսքի, լսողության խնդիրներ:

«Ուսումնական միջավայր»-ը «Գերազանց» է գնահատվել 30, «Շատ լավ»՝ 5, «Լավ»՝ 1 դպրոցներում: «Ֆիզիկական միջավայր»-ը «Գերազանց» է գնահատվել 4, «Շատ լավ»՝ 8, «Լավ»՝ 20, «Բավարար»՝ 1 դպրոցներում:

Գնահատման արդյունքների վերլուծության արդյունքում առանձնացվել են դպրոցների կողմից արդյունավետ իրականացվող և զարգացման ենթակա գործառույթներն:

Արդյունավետ իրականացվող գործառույթները վերաբերել են ներառական կրթության կազմակերպման թիրախավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման համար իրականացվող ծառայություններին դպրոցական և տարածքային մակարդակներում:

Զարգացման ենթակա գործառույթներն հիմնականում վերաբերում են ներառական կրթության կազմակերպման թիրախավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման ***համար ֆիզիկական միջավայրի ապահովմանը:***

Դպրոցներն հիմնականում ապահովված չեն՝

- ԿԱՊԿՈՒ սովորողների համար օժանդակող տեխնոլոգիաներով և սարքավորումներով (սայլակ, քայլակ, լսողական սարք, հարմարեցված գրենական պիտույքներ, հարմարեցված համակարգիչ և այլն) (ըստ անհրաժեշտության),

- սովորողի անխոչընդոտ տեղաշարժն ապահովող դպրոցի ներքին ֆիզիկական միջավայրով,

- տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար՝ դեղին գծերով, ուղենշող սալիկներով, տարածական կողմնորոշման ձայնային ազդանշաններով,

➢ սայլակով տեղաշարժվող սովորողների համար՝ դասասենյակների և սանհանգույցների դռների լայնությունը (82-91 սմ), դասասենյակում նստարանի շարքերի միջև հեռավորությունը (82-91 սմ), սեղանների բարձրության համապատասխանությունը սայլակի չափերին),

➢ սայլակով տեղաշարժվող սովորողների համար՝ անմիջապես դպրոցի մուտքի մոտ աստիճանների կողքից՝ չսայթաքող, դիմացկուն թեքահարթակով,

- հարկից հարկ տեղափոխվելու համար մատչելիությունն ապահովող վերելակով, այլ սարքավորումներով և հարմարանքներով,

- սովորողների համար մատչելի ուսումնական նյութերով՝ էլեկտրոնային, խոսող, բրայլյան տառատեսակներ, պարզեցված և հեշտ ընկալելի տեքստեր, ռելիեֆային նկարազարդումներով գրքեր, թեստեր, նկարազարդ նյութեր, ժեստերի լեզվով թարգմանությամբ ապահովված ուսումնական տեսաֆիլմեր:

Ձեռնարկված միջոցառումներ

Գնահատման արդյունքների վերլուծությունը ներկայացվել է համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին՝ զարգացման ենթակա գործառույթներն (բնութագրիչները) ըստ անհրաժեշտության բարելավելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու առաջարկով:

8. Սկսուգվող ՀՈՒՀ-երում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցման գործընթացում բոլոր առարկաների ուսուցման ապահովման գնահատում (չուսուցանվող առարկաների առկայության դեպքում)՝ ըստ մշակված ձևաթղթի

ԿՏՄ կողմից 2022 թվականի IV եռամսյակում հանրակրթության ոլորտում իրականացված ստուգումների շրջանակում ևս իրականացվել է կրթության էլեկտրոնային ուսուցման գործիքների հասանելիության (չուսումնասիրվող առարկաների առկայություն) գնահատում՝ ըստ մշակված ձևաթղթի:

Գործընթացի գնահատման անհրաժեշտություն եղել ստուգված դպրոցներից 5-ում: Գնահատված դպրոցներում հեռավար ուսուցմամբ իրականացված առարկաների, ժամկետների, իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11

ՀՀ	***Հաստատության անվանումը***	***Չուսուցանվող առարկաների անվանումը և ժամկետը***	***Հեռավար կրթության միջոցով ուսուցանվող առարկաների ուսուցման կազմակերպման ժամկետները***	***Հեռավար ուսուցում իրականացնող կազմակերպությունների անվանումը***
1.	*ՀՀ Վայոց ձորի Սարավանի հ/դ*	*«Ռուսաց լեզու», 01.02.2020թ-ից մինչ ուսումնական տարվա ավարտը, 2020-2021 ուստարին ամբողջությամբ*	*«Ռուսաց լեզու», (2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակ)*	*Կապանի հ. 3 մ/դ*
2.	*ՀՀ Շիրակի մարզի Արդենիսի հ/դ*	*«Ռուսաց լեզու» 28.08.2019թ-ից, «Գերմաներեն» 07.09.2013թ-ից*	*«Ռուսաց լեզու», «Գերմաներեն» (2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակից մինչ օրս,*	*Գյումրու տնտեսագիտական վարժարան*

			մինչև սահմանված կարգով թափուր տեղի համալրումը)	
3.	*ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի մ/դ*	*«Երաժշտություն», «Տեխնոլոգիա» (աղջիկների և տղաների), «Կերպարվեստ» առարկաները 2021-2022 ուստարի 2-րդ կիսամյակ, «Տեխնոլոգիա» տղաներ, «Կենսաբանություն» 2022-2023 ուստարի 1-ին կիսամյակ*	*«Երաժշտություն», «Տեխնոլոգիա» (աղջիկների և տղաների), «Կերպարվեստ» առարկաները 2021-2022 ուստարի 2-րդ կիսամյակ, «Կենսաբանություն» (2022-2023 ուստարի 1-ին կիսամյակ՝ մինչև սահմանված կարգով թափուր տեղի համալրումը)*	*Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն*
4.	*ՀՀ Արարատի մարզի Երասխի մ/դ*	*«Ֆիզիկա» (2022-2023 ուստարի 1-ին կիսամյակ)*	*«Ֆիզիկա» (2022-2023 ուստարի 1-ին կիսամյակ)*	*Սպիտակի հ. 8 մ/դ*
5.	*Երևանի հ. 95 հ/դ*	*«Ֆիզիկա» (2021-2022 ուստրավա 2-րդ կիսամյակ)*	*«Ֆիզիկա» (2021-2022 ուստրավա 2-րդ կիսամյակ)*	*Գյումրու Ֆուտոն վարժարան*

Ըստ ներկայացված աղյուսակի՝ 2-ական դպրոցներում հեռավար են անցկացվել «Ռուսաց լեզու» և «Ֆիզիկա», իսկ 1 դպրոցում՝ «Երաժշտություն», «Տեխնոլոգիա» (աղջիկների և տղաների), «Կերպարվեստ» և «Կենսաբանություն» առարկաները: Վերոնշյալ 5 դպրոցներից 3-ում նշված առարկաների հեռավար ուսուցումը կազմակերպվել և իրականացվել է սահմանված ժամկետներին համապատասխան՝ բացառությամբ Սարավանի և Արդենիսի հիմնական դպրոցների: Սարավանի հիմնական դպրոցում «Ռուսաց լեզու» առարկայից հեռավար ուսուցման անհրաժեշտությունն առաջացել է 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակից, սակայն նշված առարկայի հեռավար կազմակերպմամբ ուսուցումն իրականացվել է միայն 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակում: Արդենիսի հիմնական դպրոցում «Ռուսաց լեզու» առարկայից հեռավար ուսուցման անհրաժեշտությունն առաջացել է 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակից, իսկ «Գերմաներեն» առարկայից՝ 2013-2014 ուստարվանից, սակայն տվյալ առարկաների հեռավար կազմակերպմամբ ուսուցումն իրականացվում 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակից սկսված՝ մինչև սահմանված կարգով թափուր տեղի համալրումը: Հեռավար ուսուցման անհրաժեշտություն ունեցող առարկաների չուսումնասիրելուն վերաբերող խախտումներն արձանագրվել են նշված դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում:

Համաձայն լրացված հավելվածի տվյալների՝ բոլոր 5 դպրոցներում.

– հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպումը թույլատրվել և հաստատվել է լիազորված մարմնի կողմից.

– հեռավար ուսուցումն իրականացվում է դասերի ընթացքում և համապատասխանեցված է մենթոր դպրոցի ուսուցչի դասացուցակին.

– ինտերնետային կապը մշտական է.

– առկա է հարմարեցված դասարան.

–հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացն իրականացվում է անհատական համակարգիչների և պրոյեկտորի միջոցով.

– դպրոցի տնօրենի կողմից նշանակվել է դասարանի տեխնիկական մասի պատասխանատու.

– հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի ապահովումն իրականացվել է սահմանված տարբեր կամ մասնակի միջոցների կիրառմամբ.

– գրավոր աշխատանքները կազմակերպվել են թղթային եղանակով:

Ձեռնարկված միջոցառումներ

Սարավանի և Արդենիսի հիմնական դպրոցներում հեռավար կրթության կազմակերպմանը և իրականացմանը վերաբերող խնդիրների վերաբերյալ տեեկացվել է ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Շիրակի մարզպետներին:

ՌԳՍՊՎԳ վարչություն